Անժխտելի փաստ է ժամանակի ազդեցությունն արվեստագետի ստեղծագործական կյանքում: Արվե՞ստն է նրանց մեջ, թե՞ նրանք արվեստի: Ի՞նչ են մտածում, ի՞նչ են խորհում, ինչպիսի՞ երիտասարդությամբ են պատկերացնում մեր երկրի ապագան: Այս և այլ հարցերի շուրջ իր պատասխաններն ունի նկարիչ, Երևանի պետական գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր *ԱՐԱՄ ԻՍԱԲԵԿՅԱՆԸ:*

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՎԸ ԵՂԱՎ՝ ԿՀԱՂԹԱՀԱՐԵՆՔ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

-Պարոն Իսաբեկյան, ժամանակի ազդեցությունը զգո՞ւմ եք Ձեր աշխատանքների վրա:

-Ներկայումս ժամանակի բացակայության և մի քանի այլ հանգամանքներից ելնելով՝ քիչ եմ նկարում: Սակայն եթե առաջ ստեղծագործելիս ավելի շատ մտածում էի տեխնիկայի մասին, ապա վերջին տարիներին ավելի կարևորում եմ միտքը, գաղափարը: Իմ աշխատանքներում ես՝ ես եմ, իմ ոճն ունեմ: Իմ կարծիքով, ամենահետաքրքիր աշխատանքները ստեղծել եմ 1990-98 թվականներին:

-Ասում են, երբ արվեստագետն անցնում է վարչական աշխատանքի, նա սկսում է ճգնաժամ ապրել:

-Ճգնաժամի հետ համամիտ չեմ, պարզապես ժամանակը չի հերիքում: Գիտեք, եթե դու լուրջ մարդ ես, գիտակցում ես այն պարտականությունը, որ ստանձնել ես, բնականաբար, քիչ ես ստեղծագործում: Հարյուր տոկոսով կարող եմ ասել, որ եթե այս տարիների ղեկավար աշխատանքը չլիներ, ես քանակապես ավելի շատ գործեր կստեղծեի: Իսկ քանակը պրոֆեսիոնալ արվեստագետի մոտ միշտ որակ է բերում: Ինչ-որ տեղ տուժել է իմ արվեստը: Սակայն այն գործը, որ ես արել և անում եմ որպես ղեկավար, նպատակաուղղված է արվեստի կրթօջախի զարգացմանը, նոր արվեստագետներ կրթելուն: Սա ինձ մխիթարում է և լրացնում այն բացը, որը կա:

-Արվեստագետն իր էությամբ ըմբոստ է: Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր և արվեստագետ. հակասություններ լինո՞ւմ են:

-Այնքան էլ ոչ: Ես ըմբոստ եմ և՛ որպես արվեստագետ, և՛ որպես ղեկավար: Նրանք, ովքեր ինձ հետ աշխատում են երկար տարիներ, կարող են փաստել, որ ես երբեք չեմ բավարարվում եղածով: Միշտ պայքարի մեջ եմ՝ առկա խնդիրները լուծելու, բացթողումները լրացնելու, նոր միջոցներ ստեղծելու, նորը կառուցելու համար: Այս 13 տարիների ընթացքում ակադեմիայում շատ բան է փոխվել, և դա առանց ըմբոստանալու հնարավոր չէր:

-Տպավորություն է ստեղծվել, որ մշակութային կյանքը Հայաստանում վերելք է ապրում: Ըստ Ձեզ, իրողությո՞ւն է, թե՞ միայն տպավորություն:

-Որոշ չափով իրողություն է: Միջոցառումներ են իրականացվում, մշակութային շաբաթներ են անցկացվում, գործում են թատրոններ, տարբեր մշակութային խմբեր, միություններ: Այս օրերին Հայաստանում դասական երաժշտության օրեր են անցնում: Հիանալի կատարողներ են ժամանել աշխարհի տարբեր երկրներից: Հասարակության մեջ ճաշակի անկում է տեղի ունեցել: Մեզ մոտ դասական կամ բարձրարվեստ մշակույթը ներկայացնելու ժամանակ դահլիճները գրեթե կիսադատարկ են: Գիտեք, արվեստն ընդհանրապես հենց այնպես չի կարող զարգանալ: Արվեստը սիրում է պատվիրատուներ: Եթե ուսումնասիրեք արվեստի պատմությունը, կտեսնեք, որ շատ մեծ գործեր պատվիրողների շնորհիվ են ստեղծվել: Այն երկրներում, որտեղ արվեստը վերելք է ապրել, դրա հետ համընթաց եղել է նաև բարձրաճաշակ հասարակություն, հատկապես վերնախավի ներկայացուցիչները և ղեկավարները: Ընդ որում, կապ չունի, համակարգը բռնապետական է, թե ժողովրդավարական: Բռնապետն էլ կարող է բարձր ճաշակ ունենալ: Մեզանում ժամանակ է պետք, մարդիկ պետք է հասկանան, որ արվեստագետին իր աշխատանքի համար պետք է վճարել, ոչ թե միայն նվեր խնդրել:

-Պարոն Իսաբեկյան, ակնկալո՞ւմ եք որակական սերնդափոխություն:



-Գեղարվեստի ակադեմիան երբեք այսքան լավ վիճակում չի եղել իր ստեղծման օրից սկսած: Վատ շենքային պայմաններ, միջոցների բացակայություն. սրանք այլևս անցյալում են: Զարմանալի է, բայց ակադեմիան վերելք ապրեց անկախության տարիներին: Այսօր ստեղծված են բոլոր պայմանները, որպեսզի ուսանողը կարողանա ստեղծագործել, զարգանալ: Ամեն տարի ես զարմանքով և միաժամանակ հիացմունքով եմ նայում, թե ինչքան տաղանդավոր շրջանավարտներ ենք ունենում: Բայց... Այդ բայցն է, որի մասին ես քիչ առաջ ասացի: Երբ հասարակության պահանջը չկա, այդ շրջանավարտներից շատերն «աչքերը տնկում են» արտերկիր: Ցանկացած լավ արվեստագետ պետք է լավ վաստակի և լավ ապրի: Դրա հետ մեկտեղ կթողնի արժեքավոր գործեր, որոնք ժողովրդի կողմից կգնահատվեն ըստ արժանվույն, նման ազգերն արժանի են հարատևելու: Ցավոք, այսօր այդպես չէ:

-Աշխատանքի բերումով Դուք Ձեր ժամանակի մեծ բաժինը հատկացնում եք երիտասարդությանը կրթելուն, նրանց հետ հաղորդակցվելուն: Ինչ կասեք այսօրվա երիտասարդության մասին:

-Ես դրական եմ նայում երիտասարդությանը: Շատերը, միգուցե և զարմանան: Ես հավատում եմ, որ այսօրվա երիտասարդությունը կկարողանա դառնալ մեր երկրի անկախության և պետականության ամրապնդման երաշխիք: Ուզում եմ հավատալ, որ նրանց ակտիվ ու գիտակից շերտը կառաջնորդի սերունդը: Երիտասարդությունը լավը եղավ, մենք կհաղթահարենք բոլոր դժվարությունները: Իհարկե, ավագ սերունդն այստեղ անելիք շատ ունի՝ որպես դաստիարակող և կրթող:

-Արվե՞ստն է Ձեր մեջ, թե՞ Դուք արվեստում:

-Բնականաբար, արվեստն է իմ մեջ: Ես արվեստի մթնոլորտում եմ մեծացել, և առանց դրա իմ կյանքը չեմ պատկերացնում: Անգամ իմ հանգստի ժամանակ ես այցելում եմ թանգարաններ, ցուցասրահներ, հաղորդակցվում այլ արվեստագետների հետ: Ընդհանրապես, արվեստի հետ ես շատ հույսեր եմ կապում: Մենք հպարտանում ենք մեր տաղանդավոր արվեստագետների ստեղծածով, սակայն կցանկանայի, որ նոր աշխատանքներ էլ ստեղծվեն: Ի հայտ գան նոր անուններ, ովքեր իրենց գործերում հետք կթողնեն համաշխարհային մշակույթի մեջ՝ պահպանելով մեր ազգային ինքնատիպությունը:

-Իսաբեկյան ազգանունը Ձեզ օգնե՞լ, թե՞ խանգարել է:

-Միանշանակ ինձ օգնել է: Ես ծնվել եմ արվեստագետների ընտանիքում: Իմ մայրը նույնպես տաղանդավոր նկարչուհի է եղել: Ինչ խոսք, իմ հոր զավակ լինելը պարտավորեցնող է: Ես իմ ողջ կյանքում աշխատում եմ ապրել և արարել այնպես, որ այդ անվան վրա երբեք բիծ չլինի: Այդպես էլ դաստիարակել եմ իմ զավակներին:

Զրուցեց ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ